ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1525

13.04.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի ապրիլի 11-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Թալինի ՁՊՎ: Այցելության ընթացքում արձանագրվել են թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. Երկրորդ խցի բարձի երեսը կեղտոտ էր:
2. Ընդհանուր սանհանգույցը գտնվում էր կեղտոտ վիճակում և ամբողջությամբ պատված էր տհաճ հոտով: */կից ներկայացվում է լուսանկարներ – 1,2/*

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՏՍԲ
ՄՏՊ № 1676
15 04 2015 թ.

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ... ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏՊ № 2367
15 04 2015թ.

Խախտումներ՝

ՁՊՎ-ում գրանցամատյանները լրացվում են խախտումներով, ինչպես նաև Դիտորդական խմբին չի տրամադրվել ոչ մի հիմք կապված ձերբակալվածների ներքին և արտաքին շարժի վերաբերյալ:

1. Անդրանիկ Ալբերտի Սարգսյանը 27.02.2015թ-ին ժամը 11.10-ին ձերբակալվել է և նույն օրը՝ ժամը 11.15-ին ձերբակալվածի կարգավիճակով ընդունվել է ՁՊՎ: Ըստ ՁՊՎ-ի <<ՁՊՎ-ում

ՀՀ ք.Երևան 0009, Սարմենի 60
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի՝ 27.02.2015թ-ին ժամը 16.30-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ: Ա. Սարգսյանը ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում 5 ժամ 15 րոպեում մեկ անգամ ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի դուրս է բերվել զուգարան՝ ժամը 14.05-ից մինչև 14.10 ընկած ժամանակահատվածում և կրկին ըստ նշված գրանցամատյանի՝ ժամը 14.30-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ: */կից ներկայացվում է լուսանկարներ – 3,6/*

Դիտորդական խմբի համար անհասկանալի է. առանց կալանավորվելու ի՞նչ հիմքով է անձը տեղափոխվել ՔԿՀ:

2. Արտուր Միշայի Անտոնյանը ձերբակալվել է 12.03.2015թ-ին ժամը 02.50-ին: ՁՊՎ է ընդունվել նույն օրը ժամը 17.25-ին և պահվել է մինչև 17.03.2015թ. ժամը 11.35 մինչ՝ ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ տեղափոխվելը:

Արդյունքում՝ Ա. Անտոնյանը ձերբակալվել և ՁՊՎ-ում պահվել է մոտ 129 ժամ: Նշված ժամանակահատվածում ըստ ՁՊՎ-ի գրանցամատյանների գրառումների Ա. Անտոնյանը ընդհանուր իրավասության դատարան չի տեղափոխվել և չի կալանավորվել:

Երբ Դիտորդական խումբը ցանկացավ պարզաբանում ստանալ ներկայացվածի վերաբերյալ տվյալ բաժնի ծառայության գծով պետի տեղակալ պարոն Խաչատրյանը մեկնաբանեց, մեջբերում ենք <<ձերբակալվածին տեղափոխել են մեկուսարան, այնուհետև երևի դատարան>>: */կից ներկայացվում է լուսանկարներ – 3, 4,5,6, 7, 8,9,10,11/*

Միաժամանակ Ա. Անտոնյանին 15.03.2015թ-ին, բուժօգնություն է ցուցաբերվել և հրավիրվել է շտապ օգնություն: <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում չկար ոչ մի գրառում նրան խցից դուրս բերելու վերաբերյալ, իսկ <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության>> գրանցամատյանում, ընդհանրապես ոչ մի ժամ գրանցված չէր:

Ավելացնենք, ըստ << Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի 30 համարի տակ Ա. Անտոնյանին այցելել է Արագածոտնի մարզի Աշտարակի ԲԿ դատական բժիշկ, ով ՁՊՎ-ում 2 ժամ գործողություն է կատարել և տվյալ բժշկի մուտքի իրավունքը բացակայում էր ՁՊՎ-ից: */կից ներկայացվում է լուսանկար-5 /*

Այսպիսով, խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն դրանց վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում ենք մարզի ՀՊՎ-ները չընդհանրացնել և մեկնաբանությունները տալ առանձին:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-1538 <<18>> 05 2015թ.

Ձեր 13.04.2015թ. թիվ 2621/1525 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ ապրիլի 11-ին ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Արագածոտնի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության կողմից կատարված ծառայողական քննության արդյունքում տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

Դիտորդների խմբի կողմից արձանագրված թերությունները վերացվել են:

Խախտումներ.

1. Ա.Սարգսյանը 20.11.2014թ. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից մեղավոր է ճանաչվել և դատապարտվել է ազատազրկման 2 տարի ժամկետով և քանի որ վերջինս գտնվել է փախուստի մեջ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Հետախուզվող Ա.Սարգսյանը 27.02.2015թ. ժամը 11.00-ին հայտնաբերվել և բերման է ենթարկվել ոստիկանության Թալինի բաժին, ժամը 11.10-ին ձերբակալվել և ընդունվել է ՁՊՎ՝ անձնական գործ կազմելու և ՔԿՀ ուղեկցելու նպատակով: Քանի որ Ա.Սարգսյանի նկատմամբ առկա է եղել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից օրինական ուժի մեջ մտած ազատազրկման մասին կայացված որոշումը, այդ պատճառով էլ նա դատարան չի տեղափոխվել, հետևաբար ՁՊՎ վարչակազմի կողմից <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում համապատասխան գրառում չի կատարվել:

2. Ա.Անտոնյանը ձերբակալվել է 12.03.2015թ. ժամը 02.50-ին և ՀՀ ոստիկանության Թալինի բաժնի ՁՊՎ է ընդունվել նույն օրը ժամը 17.25-ին: 14.03.2015թ. ժամը 16.00-ին նա տեղափոխվել է ընդհանուր իրավասության դատարան՝ խափանման միջոցը քննության

առնելու նպատակով և նույն օրը ժամը 19.30-ին վերադարձվել է ՁՊՎ՝ արդեն կալանավորի կարգավիճակով: Դատարան տեղափոխելու վերաբերյալ ՁՊՎ վարչակազմի կողմից <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում չի նշվել կոնկրետ դատարան տեղափոխելու փաստը, իսկ կալանավորի կարգավիճակով նորից ՁՊՎ ընդունելու մասին գրառում չի կատարվել <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում:

15.03.2015թ. ժամը 12.15-ին Ա.Անտոնյանին բուժօգնություն ցուցաբերելու նպատակով հրավիրվել է շտապօգնություն և քանի որ Ա.Անտոնյանը ունեցել է վերջույթների դող ու թմրածություն, ի վիճակի չի եղել դուրս գալ խցից, ուստի նրան բուժօգնություն է ցուցաբերվել խցում, այդ պատճառով էլ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում այդ մասին գրառում չի կատարվել, իսկ խցերից դուրս բերելու մնացած բոլոր դեպքերով նշված գրանցամատյանում կատարվել են համապատասխան գրառումներ: Ա.Անտոնյանին բուժօգնություն ցուցաբերելու վերաբերյալ բժշկի կողմից կատարվել է գրառում՝ <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության>> գրանցամատյանի 3-րդ հերթական համարի ներքո և վերջինիս կողմից նշվել է նաև ժամը, իսկ ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ նշված գրանցամատյանում ընդհանրապես ժամեր նշված չեն, ապա տեղեկացվում է, որ գրանցամատյանի ոչ մի սունյակում ժամերի գրառում չի պահանջվում:

Ա.Անտոնյանը 17.03.2015թ. ժամը 09.30-ին քննիչի կողմից ներկայացված պահանջագրի համաձայն տեղափոխվել է Աշտարակ քաղաքի <<Աշտարակ>> Բ/Կ և ներկայացվել է դատական բժշկին ու նույն օրը ժամը 11.30-ին վերադարձվել է ՁՊՎ, ինչի վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվել <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի 30-րդ հերթական համարի ներքո:

Գրանցամատյաններում ոչ լիարժեք գրառումներ կատարելու և կալանավորված անձին առանց համապատասխան որոշման ՁՊՎ ընդունելու համար ոստիկանության Թալինի բաժնի հերթապահ մասի պետը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, իսկ ՁՊՎ երկու ոստիկաններ՝ խիստ նախազգուշացվել են:

ՀՀ ոստիկանության շտաբ